

ԱՐԱՔՍ

Հայ - բասկյան միջազգային գիտական հանդես

2

ARAXES

Revista internacional armenio - vasca

2

1998

ՎԱՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԲԱՍԿԵՐԵՆ - ՀԱՅԵՐԵՆ
ԶՈՒԳԱՅԵՌՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

* * *

VAHAN SARKISIAN

EUSKERA - ARMENIERA
EGOKITASUNAREN HIZTEGIA

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Ի տարբերություն հայ - բասկյան հայտնի տեղանվանական զուգահեռների, որոնց մի մասը հիշատակվել է դեռևս 16 - րդ դարի վերջերին, հայերեն - բասկերեն բառային զուգահեռները հետազոտողների տեսադաշտում հայտնվել են համեմատաբար ուշ շրջանում: Վերջին մեկուկես հարյուրամյակի ընթացքում տարբեր հեղինակների կողմից շրջանառության մեջ է դրվել շուրջ 600 բառային զուգահեռ: Սրանց հիմնական մասը բաժին է ընկնում Յոզեֆ Կարստին, Նիկողայոս Մառին, Պետրոս Պոլսեցուն և անգլիացի բասկագետ Էդվարդ Սպենսեր Դոջսոնին: Եվ եթե բասկագիտության զարգացման վաղ շրջանում՝ 16 - 18 - րդ դարերում, բասկ - իսպանացի հետազոտողները փորձում էին հայ - բասկյան տեղանվանական համընկնումները ծառայեցնել բասկերի հայկական ծագման տեսության հիմնավորմանը, ապա Յոզեֆ Կարստը, Նիկողայոս Մառը, Պետրոս Պոլսեցին և Էդվարդ Դոջսոնը իրենց հայերեն - բասկերեն համեմատական ուսումնասիրություններում հետապնդում էին միանգամայն այլ՝ զուտ լեզվաբանական նպատակներ, որոնց հարկ է մի քանի խոսքով անդրադառնալ:

Ա. Բասկերեն - հայերեն բառային զուգահեռների փոքրիշատե նշանակալի առաջին ցանկը պատկանում է անգլիացի բասկագետ Էդվարդ Սպենսեր Դոջսոնին: Անցյալ դարի վերջերին Դոջսոնը Օգյուստ Կառիերի դասարանում ծանոթանալով հայոց լեզվին, նկատում է հայերեն - բասկերեն բազմաթիվ զուգահեռներ, որոնք հրատարակում է 1894 թվականին: Իր նկատած բասկերեն - հայերեն զուգահեռների

գոյությունն ինչ - որ կերպ բացատրելու նպատակով Դոջսոնը դիմում է այն ժամանակներում որոշ տարածում գտած բասկ - կովկասյան վարկածի օգնությանը՝ գրելով հետևյալը. " Հայտնի է, որ հայերենում, որը հեշտությամբ կարող էր բառեր փոխառնել Վրաստանի իբերներից, կա մի շերտ, որը նման չէ հնդեվրոպականին: 1889 թ. ա. Օգյուստ Կառիերի դասարանում հայերենին ծանոթանալով և Փարիզի "Էկոլ նկատեցի հետևյալ բառերը, որոնք բասկերեն տեսք ունեն": Այսպիսով, ստացվում է, որ Դոջսոնի հիսուն բառանոց ցանկը ծառայեցվում է բասկ - կովկասյան կամ բասկ - վրացական վարկածի հիմնավորմանը, չնայած Դոջսոնի բերած հայերեն - բասկերեն զուգահեռներից ոչ մեկը վրացերենում գոյություն չունի:

Բ. Պետրոս Պոլսեցու (1840 - 1909) հայերեն - բասկերեն բառացանկն ընդգրկում է ավելի քան հարյուր բառային միավոր: Պետրոս Պոլսեցու լեզվաբանական մեկնակետն այն է, որ աշխարհի բոլոր լեզուները, այդ թվում նաև բասկերենը, տարածվել են Հայկական լեռնաշխարհից: Այս սկզբունքից ելնելով, Պոլսեցին հայերեն - բասկերեն համընկնումներին առանձին կարևորություն չի տվել և բավարարվել է միայն զուգահեռների ընդհանուր թվարկումով:

Գ. Մեր դարի սկզբներին Նիկողայոս Մառը առաջ է քաշում իր *հաբեթական* կոչված տեսությունը, որն իր մեջ ներառում էր չափազանց մեծ թվով տարբեր լեզուներ, այդ թվում՝ շումերերենը, էտրուսկերենը, բասկերենը, գրաբար հայերենը, կովկասյան լեզուները և այլն: Մառի *հաբեթական* տեսության մեջ կենտրոնական դեր են խաղացել բասկերեն - հայերեն զուգահեռները, որոնց թիվը մեծանուն հայագետի աշխատություններում հասնում է շուրջ երկու հարյուրակի: Մառի այս տեսությունը, ինչպես հայտնի է, մերժվեց և դրա հետ միասին շրջանառությունից դուրս մղվեցին բասկերեն - հայերեն զուգահեռները, որոնց մի էական մասը ընդունելի է անգամ մեր օրերի ամենախստապահանջ չափանիշներով:

Դ. Մյուս տեսությունը, որի շրջանակներում ուսումնասիրվել են բասկերեն - հայերեն զուգահեռները, պատմությանը հայտնի է *ալարողյան* անունով. այն մշակվել է ավստրիացի գիտնական Կոնրադ Օշտիրի կողմից: Նա *ալարողյան* անվանումը տվել է իր կարծիքով հնում գոյություն ունեցած մի լեզվաընտանիքի, որի տարածքային և էթնիկական ընդգրկումները չափազանց լայն էին՝ բասկերեն, էտրուսկերեն, հայերեն, լիգուրերեն, իտերերեն, եգիպտերեն, կովկասյան լեզուներ և այլն: *Ալարողյան* տեսությունը, մասնակի խմբագրմամբ, իր զարգացման գագաթնակետին հասավ գերմանացի նշանավոր հայագետ Յոզեֆ Կարստի աշխատություններում, որոնց հիմնական զանգվածը գրվել և լույս է տեսել մեր դարի երեսնական թվականներին: Կարստին է պատկանում " Ալարողներ և նախաբասկեր" աշխատությունը, որտեղ մենք ունենք հայերենի և բասկերենի առավել ամբողջական համեմատական քերականությունը և ավելի քան 400 բառային զուգահեռ: Սակայն *ալարողյան* տեսությունը նույնպես մեծվեց և ասպարեզից հեռանալով, իր հետ տարավ Կարստի կատարած հիրավի հսկայական աշխատանքը՝ բասկերեն - հայերեն փոքրիշատե հավաստի զուգահեռների վիթխարի զանգվածը:

Ե. Բասկերեն - հայերեն մի շարք զուգահեռներ էլ (շուրջ երկու տասնյակ) վկայակոչվել են Ֆլորենտինո Կաստրո Գիսասոլայի " Բասկերենի առեղծվածը հնդեվրոպական լեզուների առջև " գրքում՝ նպատակ ունենալով պարզել բասկերենի փոխհարաբերությունները հնդեվրոպական լեզուների հետ:

Այսպիսով, տեսնում ենք, որ բասկերեն - հայերեն համեմատական ստուգաբանությունները հիմնականում տարրալուծված են եղել տարբեր տեսությունների ու վարկածների մեջ և, ըստ էության, չեն դիտարկվել հայ - բասկյան ցեղակցության վարկածի այլ բաղադրիչների՝ տեղանվանական, առասպելաբանական, ազգագրական, հնագիտական և մարդաբանական ընդհանրությունների լույսով: Պատճառն այն է, որ հայ - բասկյան ցեղակցության հարցի ուսումնասիրությունը չի տարվել մեկ միասնական գիտական դպրոցի կամ ուղղության շրջանակներում, այլ հաճախ կրել է դիպվածային բնույթ: Բավական է ասել, որ մեր դարի բառասնական թվականներին ստեղծագործած Ֆլորենտինո Կաստրո Գիսասոլային անծանոթ են եղել Դոջսոնի բառացանկը, Մառի կատարած բասկերեն - հայերեն համեմատությունները և Կարստի հայագիտական - բասկագիտական ողջ ժառանգությունը, չխոսելով այլևս այն մասին, որ մեր օրերում լույս տեսնող " Բասկերեն ստուգաբանական բառարան " բազմահատոր հրատարակությունում արտացոլված է բասկերեն - հայերեն բառային զուգահեռների մի չնչին մասը միայն: Անգամ գիտական բացառիկ բարեխղճությամբ ու բծախնդրությամբ օժտված Հրաչյա Աճառյանը իր " Հայերեն արմատական բառարան " աշխատությունում զետեղել է ընդամենը մի քանի տասնյակ բասկերեն - հայերեն զուգահեռ:

Ահա այս հանգամանքներն էլ մեզ թելադրեցին բասկերեն - հայերեն զուգահեռները մեկտեղ հավաքելու անհրաժեշտությունը, որպեսզի վերջապես երևա նման համընկնումների իրական քանակը, որակը, հետևաբար նաև դրանց գիտական արժեքը արդի չափանիշներով: Այդ նպատակով մենք ձեռնամուխ եղանք բասկերեն - հայերեն նկատված զուգահեռների ամբողջական ցանկի կազմմանը. սկսած 1993 թվականից, " ԱԲԱԶՍ " հանդեսի էջերում սկսեցին տարբեր գիտնականների կողմից շրջանառության մեջ դրված առավել նշանակալի ցանկերը՝ Է. Ս. Դոջսոն (1993), Պ. Պոլսեցի (1995), Յ. Կարստ (1996), Հ. Աճառյան (1996), Ն. Մառ (1997):

Ինչպես արդեն ասվեց, բասկերեն հայերեն բառացանկերը կազմվել են տարբեր ժամանակներում, տարբեր հեղինակների կողմից, որոնք հետապնդելիս են եղել տարբեր նպատակներ և ստեղծագործել են մեծ մասամբ միմյանցից անկախ ու անտեղյակ: Սրան պետք է ավելացնել նաև այն, որ ոչ բոլոր համեմատություններն են բնություն բռնում հայերենի և բասկերենի պատմական հնչյունաբանության կողմից. բացարձակ նույնականությունների կողքին շատ հաճախ հանդիպում են զուգադրումներ, որոնք ոչ մի կերպ չի կարելի ընդունելի համարել: Նման համեմատությունները պայմանավորված են եղել ինչպես ժամանակի հնարավորություններով ու լեզվաբանական միտումներով, այնպես էլ տվյալ հեղինակի ընդհանուր լեզվաբանական ըմբռնումներով ու որդեգրած մոտեցումներով:

Այս առումով մենք ստիպված ենք եղել որոշ գտում կատարել և մինչ այժմ կուտակված զուգահեռներին ավելացնել մեր համեմատական ստուգաբանությունները, որոնց զգալի մասը տպագրվել է վերջին մի քանի տարիների ընթացքում: Բասկերեն - հայերեն զուգահեռների կա բառացանկի կազմման համար ելակետային են համարվել հետևյալ երկու չափանիշները:

1. Համեմատվող բառերի կրկնակի՝ հնչյունական և իմաստային համապատասխանություն՝ ներառյալ նաև հնարավոր զուգահեռ տարբերակների առկայությունը: Առանձին դեպքերում նկատվող կառուցվածքային և իմաստային տարբերություններն ավելին չեն, քան միևնույն լեզվի երկու բարբառների համար թույլատրելի տարբերությունները: Ամեն դեպքում, մենք առաջնորդվել ենք փոխադարձ հասկանալիության չափանիշներով՝ գտնելով, որ մնացած չափանիշները հասկանալիության ամանցյալներն են, ուստի և չեն կարող էական դեր խաղալ: Վերջին հաշվով, լեզվի բոլոր տարրերը այլ դեր ու նպատակ չունեն, բացի մարդկանց հաղորդակցվելու՝ փոխադարձ հասկանալու պահանջները բավարարելուց:

2. Ներկա բառացանկում տեղ են գտել բասկերեն - հայերեն այն զուգահեռները, որոնց հավաստիությունը մենք ընդունում ենք: Չենք թաքցնում, որ բառարանը պարունակում է շատ մեծ քանակությամբ այնպիսի հայերեն բառեր, որոնք ավանդական հայագիտության կողմից համարվել են եկամուտ բաղադրիչներ՝ այլ լեզուներից փոխառություններ: Նման բառերի առկայությունը բնավ չի նշանակում, թե մենք տեղյակ չենք դրանց ծագման վերաբերյալ տարածված կարծիքներին կամ ուզում ենք հայերենն արհեստականորեն մաքրել փոխառություններից: Բանն այն է, որ հայերենի ստուգաբանական ողջ համակարգը իր հիմնական գծերով ձևավորվել է հայագիտության և բասկագիտության՝ միմյանցից անկախ զարգացման պայմաններում, որի հետևանքով հայերենի ստուգաբանությունը գերազանցապես կողմնորոշվել է դեպի հարևան լեզվոլորտները, մասնավորապես, դեպի իրանական աշխարհը: Նման մոտեցման համար նպաստավոր հող են ստեղծել նաև արտալեզվական գործոնները և հատկապես պարսիկների դարավոր տիրապետությունը Հայաստանում: Համոզված ենք, որ ներկա բառացանկի հրատարակումը հնարավորություն կտա ընդարձակելու հայերենի ներքին ստուգաբանության շրջանակները՝ կատարելով շատ էական ճշգրտումներ ու լրացումներ: Բերենք մեկ բնորոշ օրինակ: Հայերենում դեռևս ոսկեդարյան շրջանից լայնորեն գործածվում է *հանդես* բառը, որից ունենք բազմաթիվ բարդություններ՝ *հանդիսություն*, *հանդիսանալ*, *հանդիսավոր*, *հանդիսատես* և այլն: Չնայած այս ամենին, Հ. Աճառյանը *հանդես* բառը բխեցնում է պահլավերեն վերականգնյալ **handes* ձևից, որին կցում է նաև սանս. *samdeca* "պատվեր, հանձնարարություն" և զնդ. *handaesayanuha* "ուսուցանել, սովորեցնել" բառերը (ՀԱԲ 2, 40): Բասկերենն ունի *handies-te* բառը՝ "մեծարել, փառաբանել" իմաստով. սրա բառդրություններից են՝ *handiestegi* "հանդեսի տեղ", *handizuren* "պատվելի, մեծարելի", *handitasun* "մեծություն, հպարտություն" կազմությունները, որոնք համապատասխանում են հայերեն *հանդիսատեղի*, *հանդիսորեն* և *հանդիսութիւն* զուգահեռ ձևերին: Բասկերեն բառերի արմատն է (*h*)*andi*

“ մեծ ”, որի հայերեն համարժեքն է *անդրանիկ* ” մեծ, ավագ ”: Սրանից հետևում է, որ հայերեն *հանդես* բառը, բասկերենի հետ համեմատության հիման վրա, կարող է բացատրվել *անդրանիկ* բառի *անդ* արմատով՝ իբրև “մեծարանք, փառաբանում”: Ինչ վերաբերում է բասկերեն բառերին, ապա պետք է ասել, որ այստեղ էլ պատկերը նույնն է՝ ակնհայտորեն չափազանցված է հարևան ռոմանական լեզուներից ենթադրյալ փոխառությունների քանակը, և միայն հայերենի հետ հավաստի համեմատություններն են հնարավորություն տալիս ճշտելու տվյալ բառի բնիկ թե փոխառյալ լինելը:

Ասվածից բացի, բասկերեն - հայերեն զուգահեռների բառարանն ունի մի շարք առանձնահատկություններ ևս, որոնց նույնպես ուզում ենք անդրադառնալ:

Ամենից առաջ աչքի է զարնում բասկերեն - հայերեն զուգահեռների բազմազանությունը. բառացանկում ներկայացված են առանց բացառության բոլոր իմաստային (թեմատիկ) խմբերը՝ ներառյալ յուրաքանչյուր լեզվի բառապաշարի հիմնաշերտը կազմող թվականները, դերանունները, քերականական կարևորագույն մասնիկները, առավել գործածական գոյականները, ածականները, բայերը, շաղկապները և այլն: Ցանկում գետնդրված է հայերենի և բասկերենի քերականական կառուցվածքը արտացոլող քերականական կազմիչների մի էական մասը, այդ թվում՝ գոյականի հոգնակիի, ածականի բաղդատականի մասնիկները, մակբայակերտ, հոլովակերտ բազմաթիվ վերջածանցներ, անգամ բայական կազմիչներ:

Այդուհանդերձ, չպետք է կարծել թե բասկերեն - հայերեն զուգահեռների բառարանի հրատարակումը ինքնաբերաբար լուծում է այդ երկու լեզուների փոխհարաբերությունների խնդիրը: Ընդհակառակը, մենք այս բառացանկը դիտում ենք իբրև հումք և ոչ ավելին: Ուզում ենք ասել, որ ներկա բառարանի հրատարակումով բասկերենի և հայերենի զուգահեռ քննությունը՝ գիտության արդի պահանջներին համապատասխանող չափանիշներով, նոր է սկսվում: Եվ այլ հարց է, որ հարկ կլինի հաղթահարել միանգամայն առարկայական գործոններով պայմանավորված զանազան նախապաշարմունքներ և կարծրացածության դրսևորումներ: Վերջիվերջո չպետք մոռանալ, որ մինչև վերջին ժամանակներս հայագիտությունն ու բասկագիտությունը միմյանց վրա չեն ներգործել, զարգացել են կրելով այլ ազդեցություններ, ուստի ցանկացած նոր համեմատություն, լեզվաբանության մեջ հաստատված ստատուս քվոն վերանայելու ցանկացած փորձ, անխուսափելիորեն հանդիպում է շատ ուժեղ դիմադրության:

Բասկերեն - հայերեն զուգահեռների բառարանի մյուս առանձնահատկությունն այն է, որ այստեղ չկան վերականգնված նախաձևեր: Առհասարակ նախաձևերի վերականգնումը, որը կատարվում է մի շարք ավանդված բառերի հիման վրա, շատ հաճախ կասկածներ է հարուցում, քանի որ երբեմն առաջարկվող նախաձևը հնչյունապես չի ծածկում ավանդված ձևերը: Մեր կողմից ներկայացվող բառացանկը պարունակում է միայն ուղղակի զուգահեռներ, որոնք երկու լեզուներում էլ պահպանել են իրենց հնչյունական կառուցվածքն

ու իմաստը, ուստի նախաձևերի վերականգնման անհրաժեշտություն չի եղել:

Բառացանկում տեղ են գտել մի շարք բառաձևեր, որոնք բասկերեն և հայերեն բառարաններում ավանդված չեն. դրանք հիմնականում հայ. -ում (սեռ. *-ման*) վերջածանցով կազմված ներկա դերբայներն են, որոնց բասկերենում համապատասխանում են *-men* վերջածանցով կազմությունները. հայ. *գաղում* (սեռ. *գաղման*) " գաղելը, քաղցնելը " և բասկ. *galmen* " կորցնելը, կորցնելու գործողությունը " և այլն:

Մենք չենք անդրադարձել բասկերենի և հայերենի համեմատական հնչյունաբանության հարցերին: Վերջիններիս առավել հանգամանալից քննությունը կատարել է գերմանացի լեզվաբան Յոզեֆ Կարստը իր " Ալարոդներ և նախաբասկեր " աշխատության մեջ, որի հիմնական դրույթները պահպանում են իրենց գիտական արժեքը մինչև օրս: Հուսով ենք, նաև, որ ներկա բառացանկի հրատարակումը կնպաստի հայերենի ու բասկերենի միասնական հնչյունական համակարգի վերականգնմանը:

Անտարակույս, կարևոր նշանակություն ունի բասկերեն - հայերեն զուգահեռների քանակի և որակի փոխհարաբերության հարցը: Մեր ցանկում ներկայացված է մի քանի հարյուր զուգահեռ, սակայն դրանց իրական քանակը անհամեմատ ավելի մեծ է: Եթե փորձենք առկա զուգահեռները տեղավորել բասկերենի և հայերենի բառակազմական հայտնի կաղապարների մեջ, ապա կստանանք հազարավոր նոր զուգահեռներ՝ մնալով փոխադարձ հասկանալիության սահմաններում: Նման կաղապարների թվին պետք է դասել վերը նշված ներկա դերբայները, բասկ. *-tegi* - հայ. *-տեղի* վերջածանցային տարրով կազմությունները, բասկ. *-ago* - հայ. *-ագոյն* ածականակերտ մասնիկով բաղդատականները և այլն: Նման եղանակով մենք կարող ենք փաստորեն բազմապատկել բասկերեն - հայերեն զուգահեռների քանակը: Մյուս կողմից, հաշվի առնելով այն, որ ներկայումս հրատարակման ընթացքի մեջ է " Բասկերեն լիակատար բառարանը ", բացառված չէ, որ հետագայում հայտնաբերվեն բազմաթիվ այլ համընկնումներ ևս:

Մի քանի խոսք ուղղագրության մասին: Ինչպես հայտնի է, բասկերեն օգտվում են լատինական այբուբենից, որը բասկերենի հնչյունական համակարգի համեմատ բավականին աղքատ է: Այդ հանգամանքը ստիպել է բասկերին իրենց մեկ հնչյունի դիմաց երբեմն գործածել երկու լատինական տառ՝ *tx*, *tz*, *ts* և այլն: Սակայն վերջին հարյուր տարիների ընթացքում բասկերենի ուղղագրությունը նշանակալի փոփոխություններ է կրել, չնայած մինչև օրս բասկերը չունեն ոչ միասնական արտասանություն, ոչ էլ միասնական կայուն ուղղագրություն. *Txar* " վատ ", բառը, օրինակ, հնչում է մերթ *չար*, մերթ *ցար*: Շարադրանքի ընթացքում մենք հետևել ենք Բասկերի Երկրի լեզվի Թագավորական Ակադեմիայի կողմից ընդունված ուղղագրական նորմերին՝ հին աղբյուրներից բաղված օրինակներում կատարելով համապատասխան փոփոխություններ: Խոսքը վերաբերում է մասնավորապես Այսկիբելի և Ասկուեյի բառարաններին:

Բասկերենի հնչյունական համակարգը

A - Համապատասխանում է հայ. *ա-ին* բոլոր դիրքերում:

B - Շրթնային ձայնեղ պայթական հնչյուն է, համապատասխանում է հայ. *բ-ին*:

D - Համապատասխանում է հայ. *դ-ին*:

E - Կարճ կամ երկար տարատեսակներ չունի, հնչմամբ համապատասխանում է հայ. ոչ նախաձայն *ե-ին*:

G - Նույնն է հայ. *գ* - ի հետ՝ անկախ դիրքից. երբեմն այս տառով նշանակվում է հայ. քմայնացած *ղ-ին* մոտ հնչյուն (հմմտ. *tegi* «վայր, տեղ» - հայ. *տեղի* և այլն):

H - Թեև հնչմամբ մոտ է հայ. *հ-ին*, սակայն շատ թույլ է արտասանվում. առավել տարածված է պիրենեյան բարբառներում:

I - Հնչում է հայ. *ի* ձայնավորի նման:

J - Իբրև կիսաձայն համապատասխանում է հայ. *յ-ին*, սակայն որոշ խոսվածքներում նկատվում են կոշտացման զանազան դրսևորումներ, որոնց հետևանքով *յ* հնչումը փոխվում է *ժ* - ի, *խ* - ի, *ջ* - ի և այլն:

K - Արդի հնչմամբ համապատասխանում է հայ. *կ-ին*, թեև առանձին օրինակներ թույլ են տալիս համեմատել նաև հայ. *խ* - ի հետ (հմմտ. *karkoil* «թույլ, անհաստատ» - հայ. *խարխուլ* և այլն):

L - Նույնն է հայ. *լ* - ի հետ:

LL - Ունի փափուկ, քմայնացած հնչում, մոտավորապես *լ+յ* կաղապարով (խսպաներեն // - ի նման):

M - Համապատասխանում է հայ. *մ-ին*:

N - Նույնն է հայ. *ն* - ի հետ:

N - Սովորաբար լիսին հորիզոնական ծիկ ունի, որով տարբերվում է նա-

խորդից. հնչումը քնային է՝ *ն + յ* կաղապարով:

O - Հնչմամբ համապատասխանում է հայ. ոչ նախաձայն *ո-ին*:

P - Արդի հնչմամբ նույնն է հայ. *պ* - ի հետ:

R - Այս հնչյունով բասկերենում ոչ մի բառ չի սկսվում. համապատասխանում է հայ. *ր-ին*:

Rr - Նույնն է հայ. *ռ* - ի հետ. նախաձայն դիրքում չի գործածվում:

S - Առավել տարածված հնչմամբ նման է հայ. *ս-ին*, թեև առանձին խոսվածքներում արտասանությամբ մոտենում է *շ-ին*:

T - Հիշեցնում է մեր առանձնային պայթական *տ* հնչյունը:

Ts - Հնչմամբ մոտ է հայ. *չ-ին*, բառասկզբին չի գործածվում:

Tx - Բազմաթիվ օրինակներում համապատասխանում է հայ. *չ-ին* (հմմտ. *txar* «վատ» - հայ. *չար* և *այլն*), թեև առանձին դեպքերում նույնանում է մեր *ժ* - ի հետ (*tximurtu* «ծալել, կնճռոտել» - հայ. *ծնրթել* և *այլն*):

Tz - Բոլոր դիրքերում համապատասխանում է հայ. *ց-ին*:

U - Որպես ձայնավոր համապատասխանում է հայ. *ու-ին*, թեև բազմաթիվ դեպքերում կարող է համեմատվել հայ. *վ* - ի հետ:

X - Հնչում է հայ. *չ* - ի նման:

Z - Ներկայումս ամենատարածված արտասանությամբ մոտ է հայ. *ս-ին*, սակայն բերված զուգահեռներում ունենք նաև *z - ծ*, *z - ց* և *z - ժ* համապատասխանությունը (հմմտ. *zabal* «լայնություն, լայնք» - հայ. *ծալալ, zetu* «մանրացնել, պատառոտել» - հայ. *ցիտ, ցտել* «ճեղքել, կիսել», *zul* «փայտ» - հայ. *ճիղ* և *այլն*):

Բացի նշված հնչյուններից, բասկերենն ունի նաև շնչեղ խուլ եռյակը՝ *ph, th, kh* (հայ. *փ, թ, ք*). սրանք, որպես կանոն, բառարաններում առանձին չեն նշվում, այլ դիտվում են իբրև *p, t, k* հնչյունների շնչեղ տարբերակներ:

Abar «ճյուղ, ձող, երկար ճյուղ» - *բարունակ* «ճյուղ»:

Abar «որպես, իբրև» - *ա-բար* «որպես, ինչպես». հավան- *ա-բար*, թեթև- *ա-բար* և այլն:

Abarrakitu «կտրատել, կտոր-կտոր անել» - *պատակտել* «բաժանել, քանդել, անջատել»:

Abarrakitumen «կտրատելը, կտոր - կտոր անելը» - *պատակտում* (սեռ. *պատակտման*) «բաժանելը, քանդելը, անջատելը»:

Abere «կենդանի» - *ապրել* «ապրել, գոյատևել»:

Adin «տարիք» - *ատեն* «ժամանակ»:

Agur «ողջույն» - *այգոր* - ել «ողջունել»:

Agurmen «ողջունելը» - *այգորումն* (սեռ. *այգորման*) «ողջունելը»:

Ahots «ձայն» - *խաւս* «խոսք, բառ»:

Ahoztu «խոսել» - *խաւստովան* - ել «խոստովանել»:

Ahoztumen «խոսելը, մի բան ասելը» - *խաւստում* (սեռ. *խաւստման*) «խոսում, խոստովանություն»:

Aig (aigu) «եկ, արի» - *եկ (էկո, էկուր)* «եկ, արի»:

Aina «այն, նա» - *այն (ու հլ.)* «այն, նա»:

Ainbeste «այնչափ» - *այնպես* «այնպես, նրա նման»:

Hainmestez «տանելի, ոչ վատ» - *համեստ* «համեստ»:

Aingana «այնչափ, նրա չափ» - *այնքան* «նրա չափ» (հմմտ. նաև *հանգոյն* «նրա նման, նրա պես, այնպես»:

Aintz «այծ» - *այծ* «այծ»:

Aintzina «հնում, անցյալում» - *անցեալ* «անցյալ, անցած ժամանակը»:

Aintzinatu «առաջանալ, անցնել» - *անցան* - ել «անցնել»:

Aiseta «հեշտ» - *հեշտ* (*ի* - *ա* հլ.) «հեշտ»:

Aita-tu «նշել, ցույց տալ, հայտնել» - *յայտնի* «հայտնի»:

Aize «քամի» - *այս* «քամի»:

Aiz «դու ես» - *ես* «դու ես, կաս»:

Ak «նա, այն, այն մեկը» - *ոք* «ոմն, ինչ - ոք մեկը»:

Akar «նախատինք, պարսավանք» - *հակառակ* «ներհակ»:

Akarrean «կովելով, վիճաբանելով» (հմմտ. նաև *akarbide* «կովի պատճառ», *akar gorri* «թեժ կոխի», *akarkizun* «նախատինք, պարսավանք», *akartu* «կովել») - *հակառ* «դեմ, ընդդեմ, ներհակ» (հմմտ. *հակառակիչ*, *հակառակորդ*, *հակառակություն* են.):

Alakatu «դժգոհել, ողբալ» 2. «կանչել, ձայն տալ» - *աղաղակ* - ել «աղմուկ հանել, ձայն տալ, կանչել»:

Alako «նման, հավասար, նույնպիսի» - *հաղ* «կից, կցված»:

Alatu «երդվել, կանչել» - *աղատ* - ել «խնդրել, աղերսել» (հմմտ նաև *աղաթթ*, *աղաթ* - ել «աղոթք, աղոթել»):

Alatumen «երդվելը, կանչելը» - *աղատում* (սեռ. *աղատման*) «աղատելը, խնդրելը, աղերսելը»:

Alika «թույլ, ընկճված, ուժաթափ» - *հեղզ* (սեռ. *հեղզի*, *հեղզա*) «թույլ, ծույլ»:

Amaitu «վերջացնել» - *աւարտ* - ել «վերջացնել»:

(*H*) *an* «այնտեղ» - *հոն* (բրբ.) «այնտեղ»:

Anbartu «փակել, պարփակել» - *ամբարել* «կուտակել»:

Andana (*andena*) «բազմություն, խումբ» - *անդեայ* «հոտ, նախիր, կենդանիների բազմություն»:

Andatu «նետել, դեմ գցել, շարտել» - *անջատ* «զատ, առանձին»:

Andiari «մեծություն» 2. «գոռոզություն, գերազանցության զգացում» - *անդրանիկ* «մեծ, ավագ»:

(*H*)*andi* (*anti*) «այնտեղից» - *անդի* (*անտի*) «այնտեղից»:

Hanitz «շատ» - *քանիս* «որքան, որչափ»:

Hanitez «շատ անգամ» - *քանիցս* «քանի անգամ, շատ անգամ բազմիցս»:

Antz «նման, պես» - *հանց* «նման, պես»:

Apari «ընթրիք» - *սպուր* «ուտելիք»:

Apurtu «ջարդել, մանրել, կտրատել» - *բուրդ* «բուրդ, բրդած, մանրած բան» (հմմտ. *բրդել, փրթել*):

- *Ara* «ձև, խոսելու ձև, լեզու». *eusk* - *ara* «բասկերեն» ևն (հմմտ. -*era*) - *արեն* «ձև, խոսելու ձև, լեզու». հուն - *արեն* (հմմտ. - *երեն*):

Ar «արու այծ» - *առն* «արու այծ» (հմմտ. նաև *արու, արի, այր*):

Hara «տե՛ս, այնտեղ» - *արա* (բրբ.) «հե՛յ, դու՛»:

Aradiza «թերություն, արատ» - *արատ* «թերություն»:

Araitzina «ոչ շատ վաղուց» - *առաջին* «առաջին, առաջուց, անցած, առաջացած»:

Arabera «ըստ, համաձայն» - *յարաբերեալ* «հարաբերված, համաձայն, կցված»:

Araberadun «չափավոր, համապատասխան» - *յարաբերութիւն* «հարաբերություն, համապատասխանություն»:

Arabramen «չափավորելը, համապատասխանեցնելը» - *յարաբերում* (սեռ. *յարաբերման*) «հարաբերելը, կցելը»:

Arabera «չափավոր» - *յարաբերական* «հարաբերական»:

Araitzinago «ավելի անցած ժամանակ» - *առաջնագոյն* «ամենաառաջին»:

Araitzinako «ապագա» - *առաջիկա* «ապագա, գալիք»:

(*H*)*aran* «հարթավայր» - (բրբ.) *արան* «հարթավայր»:

Arazo «գործ, զբաղմունք» - *արած* (սեռ. *արածոյ*) «արած բան, գործ»:

Ararazi «անել, մի բանով զբաղված լինել» - *արար* - ել «անել, ստեղծել» (հմմտ. նաև *արարած*)

Ardi «ոչխար» - *արտի* «ոչխար»:

Argi «լույս» - *արեգ* (սեռ. *արեգի*) «արև»:

Ari-tu (*izan*) «գրադվել, անելիս լինել» - *ան* «անել» (անց. կտ. *արարի*):

Artu «վերցնել» - *աննուլ* «վերցնել»:

Arrada «լցված, տոգած» (հմմտ. *arras* «լրիվ, ամբողջը») - *անատ* «լիքը, անատ»:

Arrandia «ձգտում, իղձ» - *եռանդ* «ուժ. կարողություն»:

Arro «ուռած, լցված» - *անոտ* «շատ, անատ»:

Arro «գետի հունը» - *անու* «գետակ»:

Artara-jarri «հարմարվել» - *յարդար* - ել «հարդարել»:

Arthez «հարթ, ուղիղ» - *հարթ* «հարթ, ուղիղ»:

Artza «արջ» - *արջ* «արջ կենդանին»:

Artzategi «արջի տեղ, վայր» - *արջատեղի* «արջի տեղ»:

Askazi «ազգական» - *ազգ* - ա - կան «ազգական»:

Astun «ծանր» - *հաստ* «հաստ, ուռած»:

Atal «կտոր, բեկոր» - *հատոր* «կտոր, բեկոր»:

Atan «հատկապես» - *հատուկ* «անանձին, հատուկ»:

Ato «նախիր, հոտ» - *հատ* «հոտ, նախիր»:

Atsegin «վայելք, հաճույք» - *հաճ* - ոյք «հաճույք, վայելք»:

Auots «ձայն» - *աուչ* «ձայն, երգ»:

Autsa «մոխիր» - *անին* «մոխիր»:

Autsi «հաչել» - *հաջել* (*հաչել*) «հաչել»:

Hazi «անել» - *հաս* - ուն «հասած»:

Aztal «կրունկ, գարշապար» 2. «ուտք, ազդր» - *ազդր* «ազդր»:

Ba «այո» 2. «իսկ, եթե» (պայմանական) 3. «այո՞, մի՞թե» (ծաղրական) - *բա* «իսկ, եթե» (պայմանական) 2. «այո՞, մի՞թե» (ծաղրական) :

Baia «խոսք, հավաստում» - *բայ* «բան, խոսք»:

Baimen «թույլտվություն, համաձայնություն» - *պայման* «համաձայնություն, պայման» :

Baimenez «թույլտվությամբ, համաձայնությամբ» - *պայմանից* «պայմանով, համաձայնությամբ»:

Baizik «սակայն, բայց» - *բայց* «սակայն»:

Bakarrik «միայն, սուսկ» - *բացառիկ* «եզակի, բացառիկ»:

Bakar-tu «անջատել, բաժանել» - *բացառ-ել* «անջատել»:

Balaku (*phalaku*) «շոյանք, գգվանք» - *փաղաքշ* - ել «շոյել, գգվել, փաղաքշել»:

Banatu «բացել, բաժանել, անջատել» - *բանալ* «բացել»:

Barano «շրջան, շրջանակ» - *պար* «օղակ, շրջան»:

Barauts «փրփուր» - *փրփուր* «փրփուր»:

Barbar «շատախոսել, դատարկաբանել» - *բարբառ* - ել «խոսել, մի բան ասել»:

Barhandu «պահել» - *պարհել* «պահել»:

Barraitu (*barratu*) «ցրել, տարածել» - *վարատ* - ել (*վարատել*) «ցրել, տարածել»:

Barri-keta «շատախոսություն» - *բառ* «խոսք»:

Barrun «ներսը, ներսի մասը» 2. «ընդերք» - *պարունակ*- ել «ընդգրկել, ներառնել»:

Barrutu «պարունակել, ներառնել» (*barrura-tu* «մտնել, խորանալ, ներթափանցել») - *պարուր* - ել «փաթաթել, ներառնել, պարունակել» :

Barziatu «ծակել» - *վարս* - ել «գասակ, սպիտակ»:

Beartu «կարիք ունենալ» (հմմտ. նաև *peitu* «պետք, կարիք ունենալ») - *պարտ* (սեռ. *պարտու*) «պարտք, պարտավորություն» (հմմտ. նաև *պետք* «հարկավորություն, կարիք»):

Behe «ցած, ներքև» - *վհհ* (սեռ. *վհհի*) «անդունդ»:

Beltz «սև» - *պիղծ* «կեղտոտ»:

Beltzago «ավելի սև» - *պղծագոյն* «ավելի կեղտոտ»:

Belu «ուշ» - *վաղ* (սեռ. *վաղու*) «անցյալ, ուշ»:

Beluago «ավելի ուշ» - *վաղագոյն* «ավելի ուշ»:

Beluz-ko «ուշ, մի փոքր ուշ» - *վաղուց* «հնուց, վաղուց»:

Berant «ուշ» - *վաղանդ* «ուշ, վաղուց»:

Bero «տաքություն» - *բորբ* (բրբ. *բերի*) «տաք, ջերմ»:

Berr- գործողության կրկնակիություն ցույց տվող նախածանց - *վեր* - կրկնակիության նախածանց:

Beso «թև» - *բազուկ* «թև»:

Bideratu «ճանապարհ գնալ, ընթանալ» - *պտրտ* - *իլ* «շրջել, ման գալ»:

Bikor «կտոր, հատված» - *բեկոր* «կտոր, հատված»:

Bits «փրփուր, կեղտի հետք» - *բիծ* «հետք, նշան»:

Bobu «ուրվական, ոգի» - *բորբո* «երևակայական հրեշ, որով վախեցնում են երեխաներին» (մնկ.) :

Bola «փայտե շրջանակ» 2. «խումբ, բազմություն, մեծ քանակություն «- *բոյլ*» խումբ, բազմություն»:

Bolaran «առատ, լիքը» - *բոլոր* - ել «լրանալ, լցվել»:

Borro «երեխաների լացը, հեծկլտոցը» - *պոռ* - ալ (*բոռալ*) «գոռալ, ձայն տալ»:

Boxi «մանր կտոր, բեկոր» - *փոշի* «փոշի»:

Buiatu (*buitu*) «լցնել, ուոցնել» - *բուտ*, *բտել* «սնուցել, մեծացնել, աճեցնել»:

Dalandal «լիքը, լիքը լցված» - *թաղ* «լիքը, առատ, սեղմված», *թաղթաղուն* «լիքը, առատ»:

Daldal (dolda, duldura) «ցնցում, տատանում, բարախյուն» - *դողդող* - ալ «ցնցվել, դողալ»:

Dei «տեղ, վայր» - *դեհ* «կողմն, կող» (հմմտ. *դի* «կողմն») :

Deitu «կանչել, ձայն տալ» - *դիւթ* (սեռ. *դիւթի*) «կախարդ, վիուկ», *դիւթ* - ել «կախարդել, դյութել»:

-*di* առատություն ցույց տվող վերջածանց - *տի* հոգնակերտ վերջածանց. մանկ - *տի* «մանուկներ» են:

Doi (dui, duin) «չափավոր, ճշգրիտ» - *դուն (դոյն)* «քիչ, ոչ մեծ քանակությամբ»:

Doiez «աղքատ, ոչ հարուստ» - *դոյզն* «քիչ, սակավ, աննշան, անարժեք»:

Dunda «կայծակ, որոտ, ամպրոպ» - *թունդ* (սեռ. *թունդո*) «որոտ, մեծ աղմուկ» (հմմտ. *թնդալ, թնդանոթ* են):

Durduri (urduri) «անհանգիստ, գրգռված» (հմմտ. նաև *urduri* «նույն նշ.») - *դրդ* - ել «գրգռել, դրդել» (հմմտ. նաև *յորդոր, յորդոր* - ել) :

Dzart egin «պարանը կտրվելը, մի բանի պոկվելը» - *ջարդ* - ել «կտրել, ջարդել»:

Ebaki «կտրել, հատել» - *բաց, բաց* - ել «բանալ, կտրել, ճեղքել»:

Eden «տեղավորել» - *դն* - ել «դնել, տեղավորել»:

Egiastu «հաստատել» - *հաւաստ* - ել «հաստատել»:

Egiastupen «հաստում, հաստատելը» - *հավաստում* (սեռ. *հաւաստման*) «հաստատում, հաստատելը»:

Egoite «լինել, գոյություն ունենալ, մի տեղ մնալ» - *գոյ* «գոյություն»:

Egotzi (egoitzi) «նետել, դեն շարտել» - *գգ* - ել «նետել»:

Egun «օր» - *այգուն* «առավոտյան»:

Eguantz (egunantz) «արշալույս» - (բրբ.) *էգուան* «առավոտ, վաղը»:

Egunez (egunaz) «ցերեկով, օրվա ընթացքում» - (բրբ.) *էքունց* «վաղն առավոտյան»:

Eguzki (ekhi) «արև» - *էգուց* (սեռ. *էքսի*) «վաղը»:

Ehein «հյուսել, գործել» - *հէն* - ուլ (*հին* - ել) «գործել, հյուսել», *հէնք* «գործվածք»:

Ekaitz «փոքրիկ, ամպրոպ» - *կայծ* - ակ «շանթ»:

Ekarri (karri) «բերել» - *կիր, կր* - ել «տանել»:

(*H*)*elantz* «դեպք, իրադարձություն» - *եղած* «կատարված, եղած բան»:

Elde «հոսք, հորձանք» - *եղտիր* «ջրոտ տեղ, ճահիճ»:

Elge «հարթ» - *յիղկ, յղկ* - ել «հարթեցնել, հղկել»:

Elger «խենթ, հիմար» - *յելագար* «խենթ, գիժ»:

Elhar «ծոթրին» - *ոլոռն* (սեռ. *ոլոռան*) «ոլոռ»:

Elki «դուրս գալը, ելնելը» - *ելք* (սեռ. *ելքի*) «ելնելը, դուրս գալը»:

Eltzegor «եղջյուր, եղջերափող» - *եղջիր* (սեռ. *եղջեր*) «եղջյուր, եղջերափող»:

Emoi «նվեր, պարգև» - *մոյր* «ողորմություն»:

En- «ես». հանդես է գալիս միայն թեք հոլովածներում – *ին* - «ես». հանդես է գալիս միայն թեք հոլովածներում՝ *ին* - ձ, *ին* - եւ և այլն:

Ena «արդ, ուրեմն, ահա, ահավասիկ» - (բրբ.) *հենա* «ահա, ահավասիկ»:

Enbat «թուխ ամպ» - *ամպ (ամբ)* «ամպ»:

Enphoildu «քանդել, ավերել» - *փոյլ-, փուլ, փլ* - ել «քանդել, ավերել»:

Enthoildu «ծուլանալ» - *թոյլ* «թույլ»:

Enzun «լսել, ականջ դնել» - *անս* - ալ «լսել»:

Epel (ephel) «գաղջ, գոլ» - *եփ* - ել «եփել, տաքացնել»:

- *Era* «ձև, խոսելու ձև, լեզու». *eusk- era* «բասկերեն», *espani - era* «իսպաներեն» ևն (հմմտ. -*ara*) - - *երեն* «ձև, խոսելու ձև, լեզու» . հայ - *երեն*, բասկ - *երեն* ևն (հմմտ. - *արեն*. հուն - *արեն*):

Eraki «եռացնել» - *եռ, եռ* - ալ «եռալ»:

Erantzi «մերկ» - *ամանց* (բրբ. *ամանցի*) «մի բանից զուրկ, առանց»:

Erasa «ասացվածք» - *ամած* «ասույթ, առած»:

Erdi «կես» - *հերձ* - ել «կտրել, հատել»:

Eregi «շինել, կառուցել» - *երկ* «գործ, աշխատանք»:

Eren «երրորդ» - *եռանդ* «երեկ չէ նախորդ օրը»:

Eren «նրանց» - *իրեն* «նրանը, իրենը»:

Eredu «ձև, կաղապար» - *արդ* (սեռ. *արդու*) «ձև»:

Eresti «երգ» - *երածիշտ* (սեռ. *երածիշտի*) «երածիշտ»:

Ereti «առիթ» - *առիթ* (*ի* հլ.) «առիթ»:

Eretz «մաս, կող, կողմն». 2. «տեսք, արտաքին» . 3. «տեղ, վայր». 4. «դիրք, ճակատ». 5. «ճակատ, առջևը, առջևի մասը» - *երես* «դեմք, կողմ»:

Eretzean «առջև, դիմաց, դեմը» - *երեսին* «դեմքին, դեմը դեմքի վրա»:

Eretz - eretzean «դեմ - դիմաց» - *երես - երեսի* «դեմ - դիմաց»:

Eretzi «երևալ, թվալ» - *երես* - ալ «երևալ, թվալ»:

Erka «ակոս» - *հերկ* - ել «հերկել, ակոս անել»:

Erkatu «համեմատել» - *երկատ* - ել «երկու մասի բաժանել»:

Erkingu «ելք» 2. «արևելք» - *երկինք* «երկինք»:

Erkin «թույլ, անուժ, տկար» - *երկնչ* - իլ «վախենալ»:

Erkin «երկունքի ցավերի մեջ գտնվող» - *երկն* (սեռ. *երկան*) «երկունքի ցավեր»:

Ernai «արթուն, զգոն, ուշիմ» - *յանն* - ել «հառնել»:

Erre «վառել, այրել» (հմմտ. *eraki* «եռացնել») - *այր* - ել (բրբ. *էրել*) «վառել»:

Erreka «զետ» - *երակ* «երակ»:

Erten «մեկնել, դուրս գալ» - *երթ*, *երթ* - ալ «զնալ»:

Esan «ասել» - *աս* - ել «ասել» (բրբ. *ըսել*):

Eski - *erki* «հիրավի, իրոք» - *իսկ* «սակայն, բայց»:

Ete (*ote*) «եթե» - *եթե* «եթե»:

Eten «ջարդել» (հմմտ. *atal* «կտոր, բեկոր») - (բրբ.) *էտել* «կտրել, կտրատել»
(հմմտ. *հատել*, *հատոր*):

Euli «վախկոտ, թույլ» - *յոյլ* (սեռ. *յոյլի*) «թույլ»:

Ez «ոչ» - *ոչ*, *չ* - «ոչ»:

Ezi «քանի որ, որովհետև» - *զի* «քանի որ, որովհետև»:

- G -

Gain (*gan*) «զագաթ» - *զանգ* (*զանկ*) «զլխի վերնամասը»:

Gal-du «կորցնել» - *զաղտ* - նի «թաքուն, ծածուկ», *զաղ* - ել «ծածկել, թաքցնել»:

Galmen «կորցնելը, կորցնելու գործողությունը» - *զաղում* (սեռ. *զաղման*) «թաքցնելը, կոծկելը»:

Gar (*kar*, *khar*) «կրակի բոցը» - *խար* (*կան*) «կրակ»:

Gardi «տեսակետ, կարծիք» - *կարծիք* «տեսակետ»:

Gari «հացահատիկ» - *զարի* «զարի»:

Garri «ունակ, կարող» - *կարի* «ունակ»:

Geiago «ավելի» 2. «ավելի առաջ» - *գերագոյն* «ավելի բարձր»:

Geixo «հիվանդ» - *գէշ* (սեռ. *գիշո*) «ղիակ»:

Geitu «կուտակել, դիզել» - *կիտ* - ել «կուտակել»:

Gin «գալ» - *գն* - ալ (< *գին* - ալ) «գնալ»:

Gino «չափ, ծավալ» - *գին* (սեռ. *գնոյ* < *գինոյ*) «գին, արժեք վարձք»:

Gitxi «սակավ, քիչ» - *քիչ* «սակավ, քիչ»:

Gitxiago «ավելի քիչ» - *քչագոյն* «ավելի քիչ»:

Goan «գնալ» - *գա* - լ «գալ»:

Gogo «հոգի, ոգի» - *ոգի* (սեռ. *ոգոյ*) «հոգի, ոգի»:

Gohain-du «կշտանալ, հագնալ» - *գոհան* - ալ «գոհանալ»

Goithi «ավելցուկ, ավելացած բան» - *կոյտ* (սեռ. *կոյտի*, *կուտի*) «կույտ, կուտակված բան»:

Goitikat «փսխել» (բառացի՝ «կույտ անել») - *կուտակ* - ել «կույտ անել»:

Golgo «գիրկ, գոգ» - *կողք* (սեռ. *կողքոյ*) «գիրկ, գոգ»:

Goraki «բարձրաձայն» - *գոռ* - ալ «բարձր կանչել»:

Gori «հրավառ, տաք» (հմնտ. *gar*, *kar* «բոց») - *խոր* - ով - ել «վառել, այրել» (հմնտ. *խարել*, *կառել* ևն) :

Gutar «ձգտում, տենչանք» 2. «նպատակ, ծրագիր» - *գութ* (սեռ. *գութոյ*) «խիղճ, խղճնուանք, կարեկցություն»:

Gutitu «մանրել, փոքրացնել» - *վտիտ* «նիհար»:

- H -

Handies-te «մեծարանք, փառաբանում» - *հանդես* (սեռ. *հանդեսի*) «ծես, հանդիսություն, տոն»:

Handiestegi «մեծարանքի, հանդիսության տեղ» - *հանդիսատեղի* «հանդիսավայր»:

Handitasun «մեծություն, բարձրություն, հպարտություն» - *հանդիսություն* «հանդիսավորություն, տոնականություն, փառավորություն»:

Handizuren «պատվելի, հարգելի, մեծարելի» - *հանդիսորեն* «փառավորապես, հանդիսավոր»:

Hanitz «շատ, մեծաքանակ» - *քանի* - *ս* «որքան, որչափ»:

Hanitez «շատ անգամ, բազմիցս» - *քանիցս* «շատ անգամ, բազմիցս»:

Handiagoo «հավակնություն, մեծամտություն» - *յանդուզն* (*հանդուզն*)
«խրոխտ, անվախ, աներկյուղ»:

Hanmestez «որոշ չափով, որոշ քանակով» - *համեստ* «չափավոր, համեստ»:

Haritx «կաղնի» - *հանիճ* «կաղնի»:

Hariztegi «կաղնիների տեղ, կաղնուտ» - *հանիճատեղի* «կաղնու տեղ, կաղնուտ»:

Has «մերկ, բաց» - *հաս* - *ար* - *ակ* «բաց, պարզ»:

Haxitu «շանը գրգռել» - *հաջին* «շան հաչոց»:

Haxitu «թեթև» - *հեշտ* «հեշտ»:

Hazta «քաշ» - *հաստ* «պինդ, կուռ, հաստ»:

Haztadun «ծանր, քաշ ունեցող» - *հաստատուն* «ամուր, պինդ, հաստատ»:

Haztatu «ապացուցել» - *հաստատել* «հաստատել»:

Hebaindu «թուլանալ, տկարանալ» - *հիւանդ* «հիվանդ»:

